Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Լենուղի գյուղական համայնքի
2016 թվականի դեկտեմբերի 23-ի
ավագանու թիվ 3 նիստի թիվ 17-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար՝ Գեղամ Ղազարյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու՝ 23.12.2016թ.
թիվ 17-Ն որոշմամբ

ԼԵՆՈՒՂԻ 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում 5
Պատմական ակնարկ 6
Աշխարհագրական դիրքը 6
Օդերևութաբանական տվյալները 6
Ժողովրդագրությունը 7
Տեղական ինքնակառավարման մարմիններ 9
Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը 10
Համայնքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպություններ 11
Կոմունալ տնտեսություն 11
Բնակարանային տնտեսություն 11
Հողօգտագործում 12
Գյուղատնտեսություն 12
Շրջակա միջավայրի պահպանություն 13
Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն 13
Առևտուր եվ ծառայություններ 14
Կրթություն 14
Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ 14
Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ 15
Սոցիալական պաշտպանություն 15
Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը 16
Համայնքի ՈՒԹՀՎ (SWOT) վերլուծություն 17
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում 19
Համայնքի տեսլականի սահմանում 19
Ռազմավարական նպատակներ 19
ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում 19
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում 20
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում 21
5. Ծրագրերի առաջնահերթությունների սահմանում 25
6. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում 26
Ծրագիր 1 26
Ծրագիր 2 28
Ծրագիր 3 30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լենուղի համայնքի ռազմավարական զարգացման ծրագիրը մշակել է համայնքի ղեկավարի աշխատակազմը, համայնքի ավագանու, բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ կայացած քննարկումների արդյունքում: Վերջինս համայնքի կառավարման հետագա 5 տարիների համար կհամարվի հիմնարար փաստաթուղթ, որում սահմանված են համայնքի զարգացման հիմնական գերակա ուղղությունները:

Լենուղու համայնքապետարանի նպատակն է համայնքի բնակչությանը իրազեկել, տեղեկացնել և ներգրավել ծրագրի իրականացման գործընթացների զանազան փուլերում և ծրագրի հաջողությունն ապահովելու համատեղ դերակատարման մթնոլորտ ստեղծել հանուն Լենուղու բնակիչների կյանքի բարելավման:

Ցանկացած կազմակերպության, այդ թվում՝ համայնքի, կառավարման հիմնական գործառույթներն են՝ պլանավորումը, կազմակերպումը, առաջնորդումը (ղեկավարումը) և վերահսկողությունը:

Պլանավորումը կառավարչական գործունեության սկիզբն է և հիմքը: Դրանից են բխում կառավարման մնացած գործառույթները: Պլանավորումը նախանշում է այն տեղը, որտեղ ձգտում է հասնել ու գտնվել համայնքը, և ցույց է տալիս դրան հասնելու ուղիները: Պլանավորման միջոցով հստակեցվում են համայնքի նպատակները և արդյունքները, ինչպես նաև՝ ծրագրերի առաջադրումը և դրանց իրականացման համար պահանջվող ռեսուրսները:

Ռազմավարական ծրագիրը համայնքի ապագայի մասին երկարաժամկետ պատկերացումների ամբողջությունն է և պարունակում է այն արդյունքները, որին ձգտում են ՏԻՄ-երը:

Ռազմավարական պլանավորումը ռազմավարական կառավարման բաղկացուցիչ մասն է:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ լինելով միջնաժամկետ ծրագիր, կարելի է դիտարկել որպես ռազմավարական պլանավորման բաղկացուցիչ մաս:

Մունիցիպալ զարգացման ռազմավարական ծրագիրը մշակվել է Եվրոպայի խորհրդի առաջարկած և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ընդունած մեթոդոլոգիայի հիման վրա: Տեղական ինքնակառավարման ոլորտում փոփոխվող իրողություններին արձագանքելու անհրաժեշտությունը, ինչպես նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային միացած Հայաստանի հանձնառությունը հիմնավորում են կառավարության, Հայաստանի համայնքների միության և Լենուղու համայնքապետարանի մոտեցումը՝ ներդնելու այս մեթոդոլոգիան մեր համայնքում՝ առկա ռեսուրսները (քաղաքական, տեխնիկական, ֆինանսական և մարդկային) համայնքի ընդհանուր զարգացմանն ուղղելու նպատակով:

Մեթոդոլոգիան պարունակում է շահառուների ներգրավման, ռազմավարությունների մշակման, գործողությունների պլանավորման, ինչպես նաև ռեսուրսների և ներդրումների որոնման նպատակով փաստաթուղթն ավելի

մեծ լսարանի հասցնելու համար անհրաժեշտ դրույթներ: Այն հիմնված է այն հենասյուների վրա, որոնք ապահովում են պլանավորման հաջողությունը արդի աշխարհում, ներառյալ հրապարակայնության և թափանցիկության սկզբունքները, հարցերին արհեստավարժ և փորձագիտական մոտեցումը, թիմային աշխատանքը, ոլորտի հարցերին համապարփակ մոտեցումը և դրանց դիտարկումը միասնական և համակողմանի ինստիտուցիոնալ շրջանակում, բյուջետավորման գործընթացի հետ փոխկապակցվածությունը, ինչպես նաև կենսունակ, իրատեսական, կառավարելի և նպատակային ռազմավարական փաստաթուղթ կազմելու համար պահանջվող քայլերի հերթականությունը և տրամաբանությունը:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մշակման հիմնական չափանիշը համայնքի ֆինանսական կարողությունն է և համայնքի զարգացման այս հնգամյա պլանը կազմվել է՝ մեծ ուշադրություն դարձնելով հենց այս չափանիշին՝ նպատակ ունենալով կազմել առավել իրատեսական պլան:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմքը համայնքի պայմանների և սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունն ու գնահատումն է: Խնդիրն այստեղ տեղի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների գնահատման, առկա հիմնախնդիրների վերհանման, սոցիալական և տնտեսական երևույթների կանխատեսման, համայնքի ուժեղ և թույլ կողմերի բացահայտման ճանապարհով համայնքի մասին ամբողջական պատկերացում կազմելն է և համայնքի միջնաժամկետ զարգացման նպատակային ուղղությունների սահմանումը:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի կարևոր բաղադրամասերից է նաև հնգամյա ժամանակահատվածում համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Շահառուների թվում են համայնքապետարանի համայնքային ղեկավարությունը, ՀՀ կառավարությունն ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, տեղի բնակչությունը՝ ի դեմս իր կողմից ընտրված ավագանու անդամների, ինչպես նաև հենց նույն բնակչությունն անձամբ: Պլանավորումը իրականացվել է ըստ ստորև բերված սխեմայում տրված հիմնական քայլերի:



1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ



Պատմական ակնարկ

Արմավիրի մարզի Լենուղի գյուղը հիմնադրվել է 1928 թվականին: Նախկինում կոչվել է Հոկտեմբերյանի շրջանի Ստալինի անվան սովխոզ, այնուհետև՝ № 6 սովխոզ: Գյուղն ունի 1725 բնակիչ, որոնց նախնիների մի մասը տեղափոխվել են Արևմտյան Հայաստանի Վանի, Բայազետի, Արճեշի, Ալաշկերտի շրջաններից, Պարսկաստանից, Սիրիայից, Հունաստանից և Ջավախքից: Բնակչությունը հիմնականում զբաղվում է պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ:

Համայնքի բնակիչների հիմնական մասը Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ են:

Աշխարհագրական դիրքը

Լենուղին գտնվում է Միջինարաքսյան հարթավայրում: Բարձրությունը ծովի մակերևույթից 850 մետր է: Համայնքի մակերեսը կազմում է 7.9 կմ^2:

Լենուղի համայնքը գտնվում է Երևանից 50կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 10 կմ: Պետական սահմանից համայնքի հեռավորությունը կազմում է 35 կմ, հանրապետական նշանակության ավտոճանապարհից՝ 1 կմ:

Օդերևութաբանական տվյալները

Կլիման չոր խիստ ցամաքային է: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10 - 12°C-ի սահմաններում: Շոգ օրերը տևում են ավելի քան չորս ամիս՝ ուղեկցվելով չոր եղանակներով: Հուլիս և օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը 27 - 30°C է, իսկ առավելագույնը՝ 41°C: Տարեկան տեղումները տատանվում են 250 - 350 մմ. սահմաններում: Ոչ բոլոր տարիներին է առաջանում ձյունածածկույթ: Ձմեռը չափավոր ցուրտ է՝ հունվարի միջին ջերմաստիճանը -5 - -7°C է, նվազագույնը՝ -30°C: Գարնանը եղանակը հաճախակի է ենթարկվում փոփոխությունների՝ չափից առավել տաք +32°C կամ՝ ցրտահարություն: Տարվա ընթացքում ամենաշատ տեղումները դիտվում են մայիս ամսին:

Ժողովրդագրությունը

Համայնքում ապրում են 1725 բնակիչ՝ 882 կին և 843 տղամարդ: Վերջիններիս միջին տարիքը 36,98 տարի է, կյանքի միջին տևողությունը 73,57 տարի:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Երեխաներ (0-6 տ.)-102
2. Դպրոցականներ (7-17 տ.)-330
3. 18-62 տարեկան-1080
4. Թոշակառուներ-213
5. Հաշմանդամներ-35
6. Աշխատունակներ-975

Համայնքը ունի 453 ծուխ, որոնցից 39 ընդգրկված են ընտանեկան նպաստի համակարգում:

Տարիքային սանդղակ





Սեռատարիքային սանդղակ

Ազգային կազմը

Ստացվել է 19/ 12/ 2016



Լենուղիում բնակվող ազգային փոքրամասնություններից են եզդիները և ռուսները:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Լենուղի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կազմը սահմանվում է օրենքով: Դրանք բաղկացած են համայնքապետարանից և ավագանուց, ինչը համընդհանուր կառուցվածք է Հայաստանի բոլոր համայնքների համար: Լենուղի համայնքը ղեկավարում է համայնքապետը՝ իր աշխատակազմի միջոցով, համայնքապետը ընտրվում է հինգ տարին մեկ անգամ: Համայնքապետարանի աշխատակազմը և ենթակառույցները ունեն հետևյալ կառուցվածքը՝



Համայնքապետի տեղակալը կատարում է համայնքապետի գործառույթները վերջինիս բացակայության ժամանակ: Համայնքային ծառայողների աշխատանքը համակարգում և ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը: Աշխատակազմում ընդգրկված են ընդհանուր թվով 6 համայնքային ծառայողներ, որոնցից 2-ը ունեն բարձրագույն կրթություն և տեխնիկական աշխատողներ՝ այգեպան, հավաքարար, էլեկտրիկ-նաստավար, աղբատար մեքենայի վարորդ:

Համայնքի ենթակառույցներն են

Մշակույթի տուն

- Տնօրեն-1 դրույք
- Պահակ-1 դրույք

Գրադարան

- Գրադարանի վարիչ-1 դրույք
- Հավաքարար-1 դրույք:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Մակերես (քառ. մ.)	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիք	Այլ նշումներ
1	Համայնքապետարանի շենք	փ. 3, N 18	1976	310	բավարար	նորոգման	
2	Մշակույթի տուն	փ. 3, N 11	1956	420	վատ	վերականգնման	
3	Գրադարան	փ. 3, N 12	1956	46	վատ	նորոգման	
4	Առողջության կենտրոն (ՀՈԱԿ)	փ. 6, N 37	1946	601	վատ	նորոգման	
5	Նախկին մթերային խանութի շենք	փ. 3, N 21	1967	195	վատ	նորոգման	
6	Նախկին ճաշարանի շենք	փ. 3, N 6	1962	116	վատ	նորոգման	
7	Մանկապարտեզի ճաշարանի շենք	փ. 3, N 25	1962	72	վատ	նորոգման	
8	Նախկին բաղնիքի շենք	փ. 3, N 15	1960	230	վատ	նորոգման	

Համայնքի գույքը ֆիզիկական մեծ մաշվածություն ունի: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1967 թվականին, նրա մաշվածությունը պատճառ է դառնում խմելու ջրի բավականին մեծ կորստի: Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում խմելու ջրի օգտագործումը: Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 5 կմ ճանապարհ և փողոցներ:

Համայնքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունները

Համայնքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպություններն են համայնքի Ջիվանու անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը և «ՄԱՊ» ՓԲԸ-ն:

«ՄԱՊ» ՓԲԸ-ն զբաղվում է ոգելից խմիչքների և պահածոների արտադրությամբ և վաճառքով: Պահպանելով գինեգործության և կոնյակագործության լավագույն ավանդույթները՝ «ՄԱՊ» կոնյակի և գինու գործարանը հետ չի մնում նորարարություններից, որոնք տեղ են գտնում ալկոհոլային խմիչքների արտադրության ոլորտում: Հետևելով տեխնոլոգիական սարքավորումների զարգացմանը, որոնք օգտագործվում են խմիչքների արտադրության ոլորտում՝ գործարանը հաճախ վերազինվում է՝ ներդնելով արտադրության մեջ նորագույն տեխնիկական միջոցներ: Գործարանը զբաղվում է նաև պահածոների արտադրությամբ: Նրանց արտադրանքի ստեղծման աղբյուրը Արարատյան դաշտի արևահամ բարիքներն են, որոնք նրանց հմուտ մասնագետների մեծ վարպետության շնորհիվ վերածվել են արդեն քաջածանոթ տեսականուն:

Կոմունալ տնտեսություն

Համայնքն ունի կենտրոնացված գազամատակարարում: Համայնքում կենտրոնացված գազամատակարարում ունեցող տնտեսությունների թիվը 226 է: Բնակչության խմելու ջրի հիմնական աղբյուրը կենտրոնացված ջրամատակարարումն է՝ խորքային հորերի միջոցով: Օրական միջին հաշվով 8 ժամ խմելու ջուր է մատակարարվում համայնքին: Համայնքը չունի կենտրոնացված կոյուղագիծ:

Բնակարանային տնտեսություն

Համայնքը ունի 321 բնակարան՝ 10376 քմ. ընդհանուր բնակելի մակերեսով: Երեք երկհարկանի շենքեր գտնվում էին 4-րդ կարգի վթարային վիճակում, որոնցից 1 երկհարկանի շենքի 7 ընտանիքներ կառավարության կողմից ստացել են փոխհատուցում նոր բնակարան գնելու համար, իսկ երկու շենքերի 31 ընտանիքներ դեռ սպասում են կառավարության կողմից փոխհատուցման: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 50-ից ավել է, որը տարեցտարի աճում է: Կան բազմաթիվ կիսավթարային շենքեր, որոնք միջոցների սղության պատճառով չեն վերանորոգվում: Ժամանակավոր կացարաններում

(վագոն-տնակներ) բնակվում են 46 ընտանիքներ, կիսակառույց տներում՝ 6 ընտանիք:

Հողօգտագործում

Համայնքի վարչական տարածքը 792.58 հա է, բնակելի շինությունների տակ հողեր՝ 78.1 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 538 հա, մելորատիվ նախապատրաստական չմշակվող հողեր՝ 120,08 հա, արդյունաբերական, արտադրական շինությունների տակ հողեր՝ 28.3 հա, ճանապարհների տակ հողեր՝ 7 հա, առողջապահական, հանգստավայրերի, մարզական հողեր՝ 2.4 հա, ջրային ֆոնդի հողեր՝ 18.2 հա, համայնքի այլ հողեր՝ 0.5 հա:

Գյուղատնտեսական նշանակության հողերից վարելահողերը կազմում են 140 հա տարածք, պտղատու այգիները՝ 315 հա, խաղողի այգիները՝ 83 հա: Սեփականաշնորհված հողերը զբաղեցնում են 405.7 հա տարածք, վարձակալության տրվել է 132.3 հա հող: Սեփականաշնորհման ժամանակ մեկ հողաբաժնի չափը եղել է 0.65 հա:

Գյուղատնտեսություն

Լենուղու գյուղական նշանակության հողերը բնականից աղքատ լինելով հումուսով՝ 1-2 տարի չմշակելու դեպքում շատ արագ ենթարկվում են կլիմայական գործոնների ազդեցությանը և շարքից դուրս գալիս: Լենուղու տարածաշրջանը բաժանվում է հողային երկու գոտու՝ Մերձարաքսյան և Ուրծ-Կոտայք-Շամիրամյան: Հողածածկույթը բազմազան է՝ գորշից մինչև շագանակագույն: Երկու գոտիների հողատարածություններն էլ գրեթե ամբողջությամբ ինքնահոս ոռոգման տակ են, իսկ շուրջ 10 հա հողը ոռոգվում է մեխանիկակն եղանակով: Ոռոգումն իրականացվում է Մայր առու կոչվող ջրատարից: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը, պտղատու և խաղողի այգիները: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ (ծիրանի, դեղձի, սալորի, կեռասի արտադրությամբ), խաղողագործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ:

Գյուղատնտեսության բնագավառում զբաղվում են 380 ընտանիք: Համայնքն ունի շուրջ 480 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, որից կովեր՝ 143 գլուխ: Արոտավայրերի բացակայության պատճառով անասնապահության բնագավառում առաջանում են դժվարություններ: Համայնքում կա խաղողի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակման գործարան՝ «ՄԱՊ» ՓԲԸ-ն:

Շրջակա միջավայրի պահպանություն

Համայնքում կազմակերպված է կանոնավոր աղբահանություն: Այս աշխատանքները կազմակերպում է համայնքի միջոցների հաշվին՝ մեկ աղբահան մեքենայով: Ցավոք սրտի համայնքում աղբահանությունը դեռ տեսակավորված չէ: Համայնքը ունի իր տարածքում գործող աղբավայր համայնքից 2 կմ. Հեռավորության վրա:

Համայնքում չկան խողովակներ և կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ներքին ցանցերի վերանորոգման համար: Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով՝ ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով:

Համայնքը գտնվելով կիսաանապատային գոտում բնականից աղքատ է կանաչապատ տարածքներից: Վերջին տարիներին բավականին լուրջ աշխատանք է տարվում կանաչապատ տարածքների ավելացման ուղղությամբ. կազմակերպվել է ծառատունկ համայնքից գերեզմանատուն տանող ճանապարհի երկու կողմերում՝ շուրջ 2 կմ. երկարությամբ, տնկվել են եղևնիներ և այլ դեկորատիվ ծառեր:

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Համայնքապետարանի տրամադրության տակ գտնվող ընդհանուր օգտագործման ճանապարհները կազմում են 6կմ, որոնք ոչ ասֆալտապատ են, համայնքի ասֆալտապատ ճանապարհը 1.5 կմ է, որը համայնքը կապում է մարզկենտրոնի հետ:

Տրանսպորտային հաղորդակցություն

Համայնքը կապը մարզկենտրոնի հետ կազմակերպվում է երթուղային տաքսիների միջոցով, որոնք աշխատում են 30 րոպե հաճախականությամբ: Մինչև մարզկենտրոն հասնելու մեկ ուղևորի ճանապարհավարձը 150 դրամ է:

Հեռահաղորդակցությունը

Համայնքը ունի ֆիքսված հեռախոսակապ, բջջային հեռախոսակապ, փոստ և ինտերնետ կապ, որը ապահովվում է նորքոնշյալ կազմակերպությունների կողմից.

1. Beeline AM (բջջային և ֆիքսված հեռախոսակապ, ինտերնետ)
2. Vivacell-MTS (բջջային հեռախոսակապ և ինտերնետ)
3. Հայփոստ(փոստային ծառայություններ)
4. Ucom (ֆիքսված հեռախոսակապ և ինտերնետ)

Առևտուր եվ ծառայություններ

Համայնքում գործում են 5 մանրածախ առևտրի կետեր, որոնցում զբաղված են 5 աշխատողներ: Համայնքն ունի նախկին մթերային խանութ և ճաշարան, որոնք չեն գործում: Այլ սպասարկման կետեր չկան:

Կրթություն

Լենուղի համայնքը ունի մեկ միջնակարգ դպրոց: Համայնքի Ջիվանու անվան միջնակարգ դպրոցը կառուցվել է 1970 թվականին: Այն վերանորոգվել է վերջին տարիներին, գտնվում է բարվոք վիճակում: Հաստատությունում ուսանում է 195 աշակերտ, աշխատում են 29 ուսուցիչներ:

Համայնքապետարանը բավականին ակտիվ համագործակցում է դպրոցի հետ՝ առաջին դասարանցիներին նվերներ, ամանորյա նվերներ և վերջին զանգի միջոցառմանը շրջանավարտներին հուշանվերներ հանձնելով, ինչպես նաև աջակցություն ցուցաբերելով դպրոցում իրականացվող որոշ միջոցառումների կազմակերպմանը:

Համայնքապետարանը իր միջոցների հաշվին դպրոցին տրամադրել է համակարգիչներ, ինչպես նաև դպրոցին հատկացնում է դրամաշնորհներ:

Համայնքի բնակչության մոտ 9 տոկոսը ունի բարձրագույն կրթություն:

Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Համայնքն ունի մեկ մշակույթի տուն: Մշակույթի տունը, որտեղ գտնվում է նաև գրադարանը կառուցվել է 1956 թվականին: Այն բաղկացած է մեկհարկանի մասնաշենքից՝ նախասրահից, դահլիճից, գրադարանից: Գրադարանում կա 6600 անուն գիրք: Գրադարանից օգտվում են գյուղի բնակիչները՝ այդ թվում նաև դպրոցահասակ շատ երեխաներ: Շենքը մասնակի վերանորոգվել է 1982 թվականին, որից հետո մշակույթի տան բարեկարգմանն ուղղված աշխատանքներ չեն եղել: Անմխիթար վիճակում է գտնվում շենքի տանիքը, որի պատճառով հորդառատ անձրևների ժամանակ հատկապես լուրջ վտանգ է ստեղծվում գրքերի համար: Մշակույթի տան հատակը, պատերը, դռները և պատուհանները գտնվում են կիսախարխուլ վիճակում: Նման պայմանները չափազանց լուրջ խոչընդոտ են ստեղծում համայնքում մշակութային կյանքի զարգացման համար:

Համայնքում գործում է պարի խմբակ, որը մշակույթի տան կիսավթարային վիճակում գտնվելու պատճառով պարապմունքներն իրականացնում է համայնքի դպրոցի դահլիճում: Պարի խմբակը Հայաստանում և Հայաստանից դուրս մասնակցում է մի շարք փառատոնների՝ գրավելով մրցանակային տեղեր: Համայնքապետարանը իր աջակցությունն է ցուցաբերել պարի խմբակին՝ տրամադրելով ճանապարհածախս:

Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Համայնքում գործում է 1 առողջության կենտրոն: Առողջության կենտրոնի շենքը կառուցվել է 1946 թվականին: Այն գտնվում է բավականին անմխիթար վիճակում և հիմնովին վերանորոգման կարիք ունի: Անհապաղ պետք է վերանորոգվի առողջության կենտրոնի տանիքն ու հատակը: Չկա համապատասխան գույք և սարքավորում: Առողջության կենտրոնում զբաղված են 6 աշխատողներ:

Համայնքը ունի ֆուտբոլի դաշտ, որը գտնվում է անմխիթար վիճակում: Չկա մարզագույք: Սպորտ հրապարակի անմխիթար վիճակում գտնվելու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային միջոցառումներ կազմակերպելու հնարավորությունից:

Այս ամենի հետ մեկտեղ համայնքի սպորտային ձեռքբերումներից է այն, որ համայնքի դպրոցի շախմատային թիմը «Դպրոցականների շախմատի 11-րդ օլիմպիադայի» 2-րդ փուլում՝ 39 թիմերի հետ մրցապայքարում զբաղեցրել է 3-րդից 5-րդ տեղը:

Սոցիալական պաշտպանություն

Համայնքի սոցիալական վիճակը ոչ այնքան բարվոք վիճակում է: Վերջին տարիներին հաճախակի կրկնվող կարկտահարության և ցրտահարության դեպքերի պատճառով դժվարացել է հարկերի հավաքագրման ցուցանիշը: Եվ այդ պատճառով հնարավոր է լինում միայն մասնակի բարելավել համայնքային ենթակառուցվածքների վիճակը: Համայնքում բավականին բարձր է գործազրկության մակարդակը, որի պատճառով մշտական բնակության նպատակով համայնքից տեղափոխվել է շուրջ 30 մարդ, որից 4-ը Երևան քաղաք, 2-ը ՀՀ այլ բնակավայր, 5-ը ԼՂՀ, 24-ը արտերկիր: Ամեն տարի արտագնա աշխատանքի է մեկնում շուրջ 60 մարդ:

Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը 39 է, ծերության և հաշմանդամության թոշակառուների թիվը՝ 213:

Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

Համայնքի ղեկավարին կից ձևավորվել և գործում են խորհրդակցական մարմիններ, որոնց գործունեության կարգը հաստատվել է ավագանու նիստով: Խորհրդակցական մարմինները կարող են խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին, այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին: Համայնքում գործում են 3 խորհրդակցական մարմիններ, որոնցից մեկը համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմին է: Ինչպես նաև ավագանու նիստով հաստատվել է տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը: Հաստատվել է նաև համայնքում՝ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը: Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության սկզբունքներն են մասնակցայնությունը, մատչելիությունը, վստահությունը, հրապարակայնությունը և թափանցիկությունը, ակտիվությունը, օպերատիվությունը և արագ արձագանքումը, արդյունավետությունը, պատասխանատվությունը և հաշվետվողականությունը:

Ավագանու նիստերին մասնակցում են նաև համայնքի բնակիչներ, նիստերի որոշումները իրենց հավելվածներով տեղադրվում են Արմավիրի մարզպետարանի կայքում և հասանելի են բոլորին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՎ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ուժեղ կողմերը

- Համայնքն ունի բարձրագույն կրթությամբ ավելի քան 115 մասնագետներ՝ տարբեր մասնագիտությունների, որոնք կարող են կազմակերպել կրթության և դաստիարակության, մշակութային, շինարարական աշխատանքներ:
- Գյուղից 2 կմ վերև կա բազալտի հանք, որը կարելի է օգտագործել գյուղի համար:
- Երևան մայրուղուց մինչև գյուղ հասնող ճանապարհը բարվոք վիճակում է:
- Համայնքը մոտ է մարզկենտրոնին:
- Համայնքում առկա են էկոտուրիզմը զարգացնելու բոլոր նախադրյալները:
- Ենթակառուցվածքների առկայություն (գազ, ջուր, էլեկտրականություն)
- Գյուղմթերքների վերամշակմամբ զբաղվող «ՄԱՊ» ՓԲԸ-ի գործունեության իրականացումը համայնքի վարչական տարածքում
- Համայնքի վարչական տարածքով անցնող հանրապետական նշանակության մայրուղու առկայությունը (Երևան-Սարդարապատ հուշահամալիր)
- Ակտիվ և թափանցիկ գործող և բնակչության վստահությունը վայելող տեղական ինքնակառավարման մարմինները

Համայնքի թույլ կողմերը

- Ճանապարհների, խմելու ջրի և ոռոգման ջրի ցանցերի անմխիթար վիճակը
- Ծնելիության նվազում՝ կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ
- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը
- Զբաղվածության ցածր մակարդակ, գործազրկություն
- Աղքատության բարձր մակարդակ
- Կոյուղու խնդիր
- Ժամանցի վայրերի բացակայություն
- Գյուղմթերքների իրացման խնդիրներ, արտադրողներին իրենց արտադրանքը շուկա հանելու հարցում ինստիտուցիոնալ աջակցության բացակայություն
- Հողերի անջրդիության, հաճախակի կրկնվող ցրտահարությունների և կարկտահարությունների պատճառով գյուղացու եկամուտների նվազում

Համայնքի զարգացման հիմնական հնարավորությունները

- Մեծ, որակյալ և բավականին մեծ թվով բարձրագույն կրթությամբ աշխատուժի առկայություն
- Զբոսաշրջության ենթակառուցվածքներ (էկոտուրիզմի հնարավորություն)
- Մրգերի պահպանման սառնարանի հնարավորություն, քանի որ համայնքում առկա է չգործող սառնարան (300 տ տարողությամբ), որը վերանորոգման և վերազինման դեպքում կարող է ծառայել համայնքին:

Համայնքին սպառնացող հիմնական վտանգները

- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը (կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր)
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը
- Ոռոգման ցանցում բետոնապատ կիսախողովակների անհապաղ տեղադրման անհրաժեշտությունը, որը կնվազեցնի ջրի կորուստը, իսկ առանց որի անհնար կլինի համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը
- Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականի սահմանում

2021 թվականին Լենուղին ծաղկուն համայնք է, որն իր բնակիչների համար ապահովում է բարենպաստ կենսական պայմաններ, մշակութային, սպորտային, կրթական զարգացող ենթակառուցվածքներ և հաջող կերպով համատեղում է իր ռեսուրսներն ու օգտագործում է հարուստ մարդկային և այլ կապիտալը՝ ստեղծելով ապահով գյուղական միջավայր իր բնակիչների համար:

Ռազմավարական նպատակներ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր:

Բարեփոխումներ կատարելով՝ նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում,
- Համայնքն ապահովել շուրջօրյա, անհրաժեշտ որակի խմելու ջրով,
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին:

ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում

Լենուղի համայնքի հնգամյա ծրագիրը առաջին հերթին ուղղված է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Վերջինիս նպատակն է բազմակողմանի ու հանգամանալից քննարկումների արդյունքում վեր հանված համայնքային խնդիրներին հնարավորինս տալ լուծումներ՝ դրանով իսկ բարելավել համայնքում կյանքի որակը:

Մոտակա տարիների՝ համայնքի ռազմավարության ծրագրի նպատակները կլինեն

- Տնտեսության կայուն զարգացման խթանում
- Համայնքի ֆինանսական վիճակի բարելավում սեփական եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացմամբ
- Աջակցություն շրջակա միջավայրի պահպանության և կանաչ տարածքների ավելացում
- Բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակի բարձրացում
- Կրթական, մշակութային, սպորտային կյանքի աշխուժացում
- Ենթակառուցվածքների վերանորոգում, կատարելագործում
- Բնակչության կենսամակարդակի բարձրացում

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Համայնքում տվյալ պահին հանրապետական, մարզային, միջհամայնքային, միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության որևէ ծրագիր չի նախատեսվում: Թեպետ 2016 թվականի ընթացքում համայնքի մշակույթի տան վերականգնման համար դիմումներ են ներկայացվել ավելի քան 20 հանրապետական, միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների ու բարեգործական հիմնադրամների, այդ թվում՝«Հայաստան համահայկական հիմնադրամ»-ին, «ՇԵՆ» բարեգործական կազմակերպությանը, «Հայ օգնության միություն» ԲԿ-ին (ՀՕՄ), «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»-ին, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին (ՀՍՆՀ այժմ՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ), «Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամին (Idea), Ասիական զարգացման բանկի ներկայացուցչությանը (ADB), «Անահիտ» մշակութային հիմնադրամին, Հայ օգնության ֆոնդին (ՀՕՖ), «Հայկական բարեգործական ընդհանուր միությանը» (AGBU), «Հայաստանի մանուկներ հիմնադրամին» (COAF), Թուֆենկյան բարեգործական հիմնադրամին, «Կազա Էսպաս» շվեյցարական մարդասիրական հիմնադրամին, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին, «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը, «Հայաստան» հիմնադրամին՝ Գլենդել, «ԱՄՆ Խաղաղության Կորպուս»-ին, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությանը, բայց դիմումների մեծ մասը մերժվել է կամ ընդհանրապես որևէ պատասխան չի ստացվել, այնուամենայնիվ՝ բարերաներ գտնելու գործընթացը շարունակվում է:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

(հազար դրամով)

Հ/Հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ	2016թ. նախատ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	34522.7	40640.0	41190.0	41882.8	42060.0	42200.0	42710.0
I	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՏԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	34522.7	40640.0	41190.0	41882.8	42060.0	42200.0	42710.0
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	10493.8	14677.2	14847.2	14840.0	14960.0	15300.0	15300.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	6491.2	10927.2	10897.2	10890.0	10890.0	11010.0	11010.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների	481.8	380.0	480.0	480.0	480.0	510.0	510.0
	Հողի հարկ	6009.4	10547.2	10417.2	10410.0	10410.0	10500.0	10500.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	3950.0	3600.0	3800.0	3800.0	3900.0	4100.0	4100.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	3950.0	3600.0	3800.0	3800.0	3900.0	4100.0	4100.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	52.6	150.0	150.0	150.0	170.0	190.0	2000.0
	Տեղական տուրքեր	52.6	150.0	150.0	150.0	170.0	190.0	200.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր	–						
1.5	Այլ հարկային եկամուտներ	–						
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	21122.9	21842.8	21842.8	21842.8	22900.0	22800.0	23500.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ							
	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
	դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							

(հազար դրամով)

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ	2016թ. նախատ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	2906.0	41200.0	4500.0	4200.0	4200.0	4100.0	3900.0
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	1165.5	2320.0	2700.0	2500.0	2500.0	2300.0	2300.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	1165.5	2320.0	2700.0	2500.0	2500.0	2300.0	2300.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր							
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում՝	1707.4	1800.0	1800.0	1700.0	1700.0	1800.0	1600.0
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող							
3.5	Վարչական գանձումներ							
	Տեղական վճարներ							
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ	1707.4	1800.0	1800.0	1700.0	1700.0	1800.0	1600.0
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*	33.1						
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							

(հազար դրամով)

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ	2016թ. նախատ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	33.1						
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ(1+2+3+4)							
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից							
2.	Պաշարների իրացումից մուտքեր							
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
	Հողի իրացումից մուտքեր							
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)							
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)							
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	վարկերի ստացում							
	ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	բյուջետային փոխատվությունների ստացում							
	ստացված փոխատվությունների գումարի մարում							
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ							
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն							
	համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից							
	բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	Փոխատվություններ							

(հազար դրամով)

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ	2016թ. նախատ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
	նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	փոխատվությունների տրամադրում							
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ							
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս							
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում							
	որից՝ ծախսեր ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը							
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ							
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	վարկերի ստացում							
	ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	փոխատվությունների ստացում							
	ստացված փոխատվությունների գումարի մարում							

5. ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Հ/հ	Ծրագրեր	Ծրագրի ընդհանուր արժեքը (մլն. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բալ)				Ծրագրի առաջնահերթությունը
			Շահառուների թիվը	Հանրության աջակցությունը	Ազդեցությունը խոցելի խմբերի վրա	Ընդամենը (բալ)	
1.	Ծրագիր 1	50.0	3	5	5	13	3
2.	Ծրագիր 2	80.0	5	3	4	12	2
3.	Ծրագիր 3	5.0	4	4	3	11	1

6. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ծրագիր 1

Խմելու ջրի ցանցի վերանորոգում

Ներածություն

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1967 թ.: Ջրագծի երկարությունը կազմում է 6 կմ:

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Վերջին տարիներին վերանորոգումներ չկատարելու պատճառով շարքից դուրս են եկել մոտ 50 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը: Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծերի հիմնական վերանորոգումը:

Ընդառաջելով բնակչության դիմումներին՝ սույն ծրագրով առաջարկվում է հիմնական վերանորոգման ենթարկել համայնքի ջրամատակարարման ցանցը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով,
- նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները,
- երաշտի տարիներին բանջարա-բոստանային կուլտուրաները փրկել երաշտից,
- կանխել կեղտաջրերի ներթափանցման վտանգը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- գտնել դոնոր կազմակերպություն, կնքել պայմանագիր նրա հետ, որի համաձայն, ջրագծի վերականգնման աշխատանքների համար ծրագրով պահանջվող գումարի 80-90 %-ը հատկացվի հիմնադրամի կողմից, իսկ 10-20%-ը համայնքային բյուջեից և համայնքի ներդրումներից,
- կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- ձեռք բերել ծրագրի իրականացման անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ,

- կազմել ԾԻԳ համայնքի անդամներից՝ կատարվող աշխատանքները վերահսկելու համար

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը կապահովվի շուրջօրյա խմելու ջրով, կնվազի խմելու ջրի կորուստները, կբարելավվեն գյուղի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով 6 կմ երկարությամբ ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 50 մլն. դրամ:

Ծրագիր 2
Մշակույթի տան, գրադարանի, համայնքապետարանի և առողջության կենտրոնի վերանորոգում

Ներածություն

Համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1956 թ., ունի 420 քառ. մ մակերես: Գրադարանը գտնվում է մշակույթի տան շենքում, զբաղեցնում է 46 քառ. մ տարածք: Համայնքապետարանի շենքը կառուցվել է 1976 թվականին և զբաղեցնում է 310 քառ. մ տարածք: Առողջության կենտրոնը կառուցվել է 1946 թվականին, ունի 601 քառ. մ մակերես:

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Համայնքի մշակույթի տունը, համայնքապետարանիի շենքը, գրադարանն ու բուժկետը վերջին տարիներին վերանորոգման չեն ենթարկվել: Մշակույթի տան և գրադարանի հատակը, պատերը, դռները և պատուհանները գտնվում են կիսախարխուլ վիճակում: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ համայնքը չունի աշխատանքից ազատ ժամերին հանգստանալու և զբաղվելու վայր: Համայնքապետարանի շենքը և առողջության կենտրոնը գտնվում են ոչ բարվոք վիճակում: Առողջության կենտրոնը ապահովված չէ ժամանակակից բժշկական սարքավորումներով և տեխնիկայով: Համայնքի առաջնահերթ խնդիրներից է նշված կառույցների վերանորոգումը և լրիվ շահագործումը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը,
- մշակույթի տան դահլիճը տրամադրել հարսանյաց արարողությունների, համայնքի ընդհանուր ժողովների անցկացման համար
- տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ,
- տրամադրել խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար,
- առողջության կենտրոնում կազմակերպել բնակչության առաջին բուժօգնությունը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- գտնել հովանավորներ և ձեռք բերել նրանց համաձայնությունը՝ պահանջվող գումարը հատկացնելու համար

- վերանորոգել մշակույթի տան շենքը, այդ թվում գրադարանը (տանիք, առաստաղ, ներքին հարդարման, ջրամատակարարման, ջրահեռացման աշխատանքներ),
- կազմակերպել բարերարների կամ համայնքի կողմից ներդրումների հարցը
- վերանորոգել համայնքապետարանի և առողջության կենտրոնի շենքերը (տանիք, առաստաղ, ներքին հարդարման, ջրամատակարարման, ջրահեռացման աշխատանքներ)
- 2021թ. վերանորոգված մշակույթի տան, գյուղապետարանի, գրադարանի և բուժկետի շենքերը հանձնել շահագործման:

Ծրագրից սպասվող արդյունքները

- բնակչության ազատ ժամանակն ավելի հետաքրքիր ու արդյունավետ անցկացնել,
- ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով մշակույթի տան և գրադարանի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների համար անհրաժեշտ է շուրջ 40 մլն. ՀՀ դրամ գումար, համայնքապետարանի համար՝ 15 մլն. ՀՀ դրամ, առողջության կենտրոնի համար՝ 25 մլն. ՀՀ դրամ:

Ծրագիր 3
Համայնքի ներքին և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

Ներածություն

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 6 կմ-ից ավելի, իսկ դաշտամիջյան ճանապարհներինը՝ մոտ 20 կմ:

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Մայրուղուց մինչև գյուղ մտնող ճանապարհն 2013 թվականին ասֆալտապատվել է և գտնվում է բարեկարգ վիճակում: Գյուղամիջյան 11 փողոցներից ասֆալտապատ է միայն կենտրոնական ճանապարհը: Բնակչության դիմումներին ընդառաջելով՝ սույն ծրագրով առաջարկվում է բարեկարգել համայնքի փողոցները:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին,
- Վերացնել փողոցների ջրափոսերը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- կատարել ավազի, խճաքարի և կավի խառնուրդի փռում համայնքի փողոցներում՝ ապագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ,
- աշխատանքները կազմակերպել 2017-2019թթ. ընթացքում::

Ծրագրից սպասվող արդյունքները

- ապահով և բարեկարգ ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհներ

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների վրա ավազի, խճաքարի և կավի խառնուրդի փռման աշխատանքների համար կպահանջվի 5 մլն. ՀՀ դրամ: